# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2024 թվականի նոյեմբերի 2-ից 8-ը քաղաք Յանչժոու (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը՝**

- Նարինե Միկիչյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

- ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, քաղաք Յանչժոու, նոյեմբերի 2-ից 8-ը

**4. Հրավիրող կողմը՝**

Միջոցառումը կազմակերպվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ազգային հարկային համալսարանի կողմից՝ ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի Ասիական նախաձեռնության շրջանակում:

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել «Համապարփակ դասընթաց Միասնական հաշվետվողականության ստանդարտի վերաբերյալ» խորագրով ուսումնական միջոցառմանը: Միջոցառման նպատակն է՝ մասնակիցներին ներկայացնել Ստանդարտի շրջանակում տեղեկությունների ավտոմատ փոխանակման համակարգի հիմնական նպատակներն ու հենասյուները՝ մանրամասն քննարկելով փոխանակման ողջ գործընթացը տվյալների ստացման աղբյուրների սահմանումից, ֆինանսական հաստատությունների պատշաճ ստուգումից, տվյալների «մաքրումից» մինչև ստացված տեղեկատվության վերլուծությունն ու կիրառումը:

Նշեմ, որ ներկայումս Պետական եկամուտների կոմիտեն ակտիվ աշխատանքներ է իրականացնում Ստանդարտի ներդրման ուղղությամբ՝ կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ, ինչպես նաև մշակելով Ստանդարտի ներդրումն ապահովող ՏՏ լուծումներ և տեղեկությունների անվտանգ կառավարման համակարգեր՝ առաջնորդվելով

ՏՀԶԿ Գլոբալ Ֆորումի կողմից սահմանված միջազգային նորմերով և ընթացակարգերով: Այս համատեքստում նշված դասընթացը շատ կարևոր էր՝ իրականացվելիք գործընթացները ավելի լավ պատկերացնելու նպատակով, քանի որ 2025 թվականին Հայաստանը իրականացնելու է իր առաջին նման փոխանակումը:

**6. Քննարկված թեմաները՝**

Նշված ուսումնական միջոցառման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում.

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի կողմից մշակված Միասնական հաշվետվողական ստանդարտի հիմնական եզրույթները, սահմանումներն ու մարտահրավերները,
- մանրամասն ներկայացվել են ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման գործընթացի բոլոր փուլերը՝ ֆինանսական հաստատությունների կողմից տվյալների հավաքագրումից մինչև վերջիններիս օգտագործումը հարկային մարմինների կողմից:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Միջոցառման ժամանակ որպես դասավանդողներ հանդես են եկել ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի ներկայացուցիչները: Միջոցառմանը մասնակցում էին ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» մասնակից պետություններից Հայաստանի Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության, Ճապոնիայի, Ինդոնեզիայի Հանրապետության, Մալայզիայի, Թաիլանդի Թագավորության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հարկային մարմինների ներկայացուցիչները՝ քննարկելով Միասնական հաշվետվողական ստանդարտի վերաբերյալ բազմաթիվ հարցեր:

Դասընթացի ընթացքում իրականացվել են նաև գործնական աշխատանքներ, որոնց շնորհիվ ավելի հստակեցվեց փոխանակման ընթացակարգը՝ պատշաճ ստուգման նպատակով ուսումնասիրելով ֆինանսական հաշիվների փաթեթներ:

Ստանդարտը ներդրած երկրների կողմից, միջոցառման ընթացքում ներկայացվել են գործնական կիրառմանն առնչվող շնորհանդեսներ՝ կիսելով իրենց փորձը անդամ մյուս երկրների հետ:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել առաջիկա դասընթացների և համաժողովների կազմակերպման մասով, որոնք ուղղված կլինեն ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» երկրների միջև համագործակցության բարելավմանը, տեղեկատվության արագ և օպերատիվ փոխանակմանը:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Առաջիկա դասընթացները և համաժողովները կազմակերպվելու են ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարության և ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» կողմից: Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցչին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

**12.11.2024թ.**